ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ, հեռ. 560 360
www.foi.am, foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA, Tel: 560 360

194-ի 7
07.03.2013թ.

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պարոն Հովիկ Աբրահամյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աբրահամյան,

Շնորհակալ ենք մեր՝ 2012թ.-ի նոյեմբերի 22-ի հարցմանը (ՀՀ ԱԺ նախագահի՝ 2012թ.-ի առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները տրամադրելու վերաբերյալ) պատասխանելու համար:

Թեեւ ԻԱԿ-ի կողմից հարցումն ուղարկելուց շուրջ 3 ամիս անց ԱԺ-ից ստացվել է ծավալուն՝ 114 էջից բաղկացած պատասխան, սակայն խնդրվող տեղեկությունները տրամադրվել են թերի, ոչ ամբողջական: Մասնավորապես, ըստ կարգադրությունների հերթական համարների՝ բացակայում է 12 կարգադրության պատճե՝ թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունների պատճենները:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2012թ.-ի թիվ 10, 12, 13, 14, 19, 44, 48, 49, 50, 59, 66, 72 կարգադրությունների պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան